ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 15-ին

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

1. Զինված ուժերի նպատակն է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ռազմական բաղադրիչի ապահովումը:

2. Զինված ուժերի խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության վրա հնարավոր զինված հարձակման կանխումը, կասեցումը, լարվածության օջախի չեզոքացումը, ռազմական գործողությունների իրականացումը, հրադադարի կամ հաշտության պարտադրումը՝ զինված ուժերի մասնակի կամ լրիվ ծավալմամբ.

2) մասնակցությունն արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետեւանքների նվազեցման եւ վերացման աշխատանքներին ու քաղաքացիական պաշտպանության, տարահանման, որոնողափրկարարական, փրկարարական, վթարավերականգնողական, ինչպես նաեւ օրենքով սահմանված այլ միջոցառումների.

3) ռազմական սպառնալիքների բացահայտումը եւ դրանց դիմակայումը.

4) սպառազինության, ռազմական տեխնիկայի եւ նյութական ռեսուրսների անհրաժեշտ մարտական ու զորահավաքային հնարավորությունների ապահովումը.

5) օպերատիվ կիրառման եւ զորահավաքային ծավալման պլանների կատարումը.

6) միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարման նպատակով մասնակցությունը խաղաղապահ կամ այլ գործողությունների.

7) մասնակցությունը դիվերսիոն-հետախուզական եւ ահաբեկչական գործողությունների կանխմանն ու չեզոքացմանը.

8) մասնակցությունը տեղեկատվական անվտանգության ապահովման գործընթացին:

3. Զինված ուժերը կազմված են զինվորական կառավարման կենտրոնական մարմնից՝ զինված ուժերի գլխավոր շտաբից, ~~զինվորական կառավարման այլ մարմիններից~~ ***հրամանատարություններից*** , զորամիավորումներից, միավորումներից, զորատեսակներից եւ զորամասերից, զինվորական հաստատություններից եւ զինվորական այլ կազմավորումներից: Պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ զինված ուժերի կազմում ընդգրկվում են նաեւ այլ զորքերը, քաղաքացիական պաշտպանության եւ արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը:

3.1. Զինված ուժերն ունեն զինանշան, որի նկարագիրը և կանոնադրությունը հաստատվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով: Զինված ուժերի զինծառայողների զինվորական համազգեստի և տարբերանշանների ձևերն ու նկարագրերը, զինվորական համազգեստի կրման կանոնները հաստատում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը: